ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 35/10-Ա «25» 02 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանում դասընթացի միջանկյալ գնահատման վերաբերյալ ուսանողների հարցման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգը կիրառել՝ սկսած 2025/2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից:
3. Սույն հրամանով հաստատված կարգը հրապարակվում է ԵՊՀ պաշտոնական կայքէջում:
4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Հովհաննիսյան

Հավելված

ԵՊՀ ռեկտորի 25.02. 2026 թ.

թիվ 35/10-2 հրամանի

ԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է ԵՊՀ-ում իրականացվող դասընթացի արդյունավետության ու որակի վերաբերյալ միջանկյալ գնահատման նպատակով ուսանողների հարցման (այսուհետ՝ միջանկյալ հարցում) անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:
2. Դասընթացի միջանկյալ հարցումը դասավանդման և ուսումնառության որակի ապահովման, շարունակական բարելավման ու դասախոսի գործունեության արդյունավետության գնահատման հիմնական գործառույթներից է և անցկացվում է ԵՊՀ կանոնադրության ու ներքին իրավական այլ ակտերի պահանջների համաձայն:
3. Միջանկյալ հարցման արդյունքներն օգտագործվում են հետևյալ նպատակներով՝
   - դասախոսի կողմից կիրառվող դասավանդման և ուսուցման մոտեցումների և մեթոդների շարունակական բարելավման,
   - դասընթացի բովանդակության, վերջնարդյունքների, ուսումնական ռեսուրսների և մատուցման որակի բարելավման,
   - դասընթացի մշտադիտարկման ու վերանայման համար որակական տվյալների հավաքագրման:

2. ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ներառված բոլոր դասընթացները (ուսումնական մոդուլները) 2025/2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից սկսած գնահատվում են առցանց անցկացվող միջանկյալ հարցման միջոցով:
2. Ուսանողների մասնակցությունը միջանկյալ հարցմանը կամավոր է: Հարցումն անանուն է:
3. Միջանկյալ հարցումը կազմակերպում և առցանց անցկացնում է դասախոսը՝ առաջին միջանկյալ քննությունից հետո, կիսամյակի 10-րդ շաբաթվա ընթացքում:
4. Ուսանողները մասնակցում են հարցմանը՝ լրացնելով դասընթացի Մուդլ հարթակում տեղադրած հարցաթերթը, որի մասին նրանք տեղեկացվում են հարթակի «հայտարարություններ» գործիքի միջոցով:
5. Միջանկյալ հարցման արդյունքները հավաքագրում, մշակում և վերլուծում է դասախոսը կիսամյակի 11-րդ շաբաթվա ընթացքում:
6. Հարցումն անցկացվում է դասընթացի միջանկյալ գնահատման միասնական հարցաթերթով (Հավելված 1), որտեղ ուսանողը պատասխանում է առաջադրված հարցերին որակական գնահատման սանդղակով:
7. Դասախոսը հարցաթերթում, ըստ անհրաժեշտության, կարող է կատարել որոշ փոփոխություններ:

3. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Դասախոսը՝
   - պահպանում է հարցումների անցկացման էթիկական նորմերն ու ապահովում տվյալների գաղտնիությունը,
   - ուսանողներին տրամադրում է հարցմանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն, խորհրդատվություն և օժանդակություն,
   - ուսանողներին տեղեկացնում է հարցումների կարգի և ժամանակացույցի մասին,
   - խրախուսում է ուսանողների մասնակցությունը հարցմանը՝ գործադրելով համապատասխան մեխանիզմներ ու միջոցներ՝ առավելագույնի հասցնելու ուսանողների մասնակցությունը,

- ապահովում է ուսանողների իրազեկումը հարցման արդյունքների և դրանցից բխող հետամուտ գործողությունների ու միջոցառումների վերաբերյալ,
- ապահովում է հարցման անցկացման համար անհրաժեշտ միջավայր ու անկաշկանդ մթնոլորտ,
- կազմակերպում է քննարկումներ միջանկյալ հարցման կարևորության, առկա խնդիրների և ընդհանուր արդյունքների վերաբերյալ:

9. Ուսանողը՝
   - հարցմանը մասնակցելով՝ նպաստում է դասընթացի, դասավանդման և ուսուցման բարելավմանը,
   - հարցերին պատասխանում է հիմնավորված, անկեղծ և կառուցողական, իր պատասխաններում բացառում է դասախոսների արժանապատվությունը նսեմացնող գրառումները, ցուցաբերում է առավելագույն անաչառություն:

4. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

10. Հարցման արդյունքները մշակում և ամփոփում է դասախոսը:
11. Հարցման արդյունքներն ամփոփելուց հետո դրանք հասանելի են դարձվում ուսանողներին և քննարկվում:
12. Դասախոսն օգտագործում է հարցման արդյունքները դասընթացի ու դասավանդման որակի բարելավման միջոցառումներ ձեռնարկելու և հետամուտ գործողություններ իրականացնելու նպատակով:
13. Դասախոսը կիսամյակի 12-րդ շաբաթվա ընթացքում ուսանողներին ներկայացնում է միջանկյալ հարցման արդյունքների ամփոփ (ընդհանրացված) պատկերն ու դրանց հիման վրա դասընթացներում, դասավանդման մեթոդներում ու տեխնոլոգիաներում կամ դասընթացի այլ բաղադրիչներում կատարված փոփոխություններն ու բարելավումները:

Հավելված 1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դասընթացի միջանկյալ գնահատման հարցաթերթ

Կրթական մակարդակ՝ [բակալավրիատ/մագիստրատուրա]

Կուրս՝ [թիվ]

Կրթական ծրագիր՝ [անվանումը]

Դասընթաց՝ [անվանումը]

Դասախոս՝ [անուն, ազգանուն]

Հարգելի՛ ուսանող,

խնդրում ենք անկեղծ պատասխանել դասընթացի վերաբերյալ ստորև ներկայացված հարցերին՝ մինչև կիսամյակի ավարտն այն բարելավելու նպատակով: Ձեր կարծիքը մեզ համար շատ կարևոր է:
Հարցումն անանուն է:

1. **Ի՞նչն էր արդյունավետ այս դասընթացի համար (կարող եք նշել մի քանի պատասխան).**
   - դասախոսությունները
   - գործնական պարապմունքները կամ հանձնարարությունները
   - լսարանային քննարկումները
   - առաջադրանքները, տնային կամ ինքնուրույն աշխատանքները
   - ուսումնական նյութերը (դասագրքեր, այլ գրականություն)
   - թվային ռեսուրսները (սլայդներ, առցանց և մուլտիմեդիա նյութեր և այլն):

2. **Ի՞նչն էր անարդյունավետ այս դասընթացի համար (խնդրում ենք նշել).**

   _____

3. **Խնդրում ենք նշել, ինչպես եք գնահատում այս դասընթացի համար նախատեսված գրականության ծավալը.**
   - շատ
   - չափավոր

- բավարար
- շատ քիչ

4. **Խնդրում ենք նշել, ինչպես եք գնահատում տվյալ դասընթացի համար նախատեսված տնային (ինքնուրույն) աշխատանքների ծավալը.**
   - շատ
   - չափավոր
   - բավարար
   - շատ քիչ

5. **Ինչպե՞ս եք գնահատում դասավանդվող նյութի բարդությունը.**
   - շատ բարդ
   - փոքր-ինչ բարդ
   - նորմալ
   - պարզունակ
   - շատ պարզունակ

6. **Որքա՞ն մատչելի է մատուցվում դասընթացի նյութը.**
   - շատ հասկանալի
   - հասկանալի
   - անհասկանալի
   - չափազանց անհասկանալի

7. **Արդյո՞ք տրամադրված ուսումնական ռեսուրսները և դասախոսի խորհրդատվությունը բավարար են Ձեր ուսումնական կարիքների համար.**
   - լիովին բավարար են
   - բավարար են
   - բավարար չեն

8. **Որքանո՞վ են արդյունավետ ընթացիկ և միջանկյալ գնահատումները (առաջադրանքներ, հարցումներ, քվիզներ, հետազոտական աշխատանքներ և այլն): Արդյո՞ք դրանք համարժեք են գնահատում ձեր գիտելիքները նյութի վերաբերյալ:**
   - շատ արդյունավետ են
   - արդյունավետ են
   - անարդյունավետ են
   - խիստ անարդյունավետ են

9. **Ընդհանուր առմամբ որքանո՞վ եք գոհ դասընթացից մինչ այժմ.**
   - շատ գոհ եմ

- ընդհանուր առմամբ գոհ եմ
- ընդհանուր առմամբ դժգոհ եմ
- շատ դժգոհ եմ

10. Խնդրում ենք ներկայացնել տվյալ դասընթացի բարելավմանն ուղղված Ձեր առաջարկները:

_____

Շնորհակալություն անկեղծ պատասխանների համար: